

Կանխագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Պր 4



ՏՊԱԳՐԻՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՄԱՐԿԱՆ

ՄԱՐԿԱՆ

ՄԱՐԿԱՆ

ՄԱՐԿԱՆ

ՄԱՐԿԱՆ

ՄԱՐԿԱՆ

ՄԱՐԿԱՆ



ՀԱՅԿԱՆ

ՀԱՅԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ هانراكيداق HANRAKIDAGUE

ՀԱՐԱՐԱԿԱՆ مجوعة علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 4 || 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1903

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՋ



13. Խօսքեր կ'անցնին, գրուածք կը մնայ

Փ

ոքրի՛ք աղջիկ, վերջը դուն շատ անգամ
պիտի ըսես այս խօքը . « Ասիկա խոստա-
ցա՞յ : Շատ կարելի է : Չեմ յիշեր, Բայց ո-
րովհետեւ գրուած չէ, խոստացած չեմ » :
« Խօսքերը կ'անցնին, գրուածքը կը մնայ » :

Յիշէ՛. որ եթէ խօսքդ պահես, եթէ բե-
րանացի բան մը խոստացար, բացարձակա-
պէս խղճմտօրէն խոստացած ես ըսածդ ը-
նել : Եթէ սովորութիւնը կը պահանջէ, որ շատ կարեւոր խոս-
տումները . շատ լուրջ երաշխաւորութիւնները միայն գրաւոր լի-
նին, անոր համար է որ կրնայ ըլլալ որ մոռնանք, եւ լաւ է որ
չօչափելի բան մը ունենանք աչքի առջեւ մեր խոստումը յիշելու
համար : Ուրեմն աւելի խոհեմութեան համար արձանագրութիւն
մըն է քան թէ գրաւոր ապացոյց : Բայց պատուաւոր կինը, պատ-
ուաւոր մարդը երբ ըսէ թէ խոստացած է՝ այնպէս պիտի ընէ, իրեն
թէ գրած լինի :

Եթէ դու արտասանած խօսքդ չես պահեր, կրնայ լինիլ որ
գրաւոր խոստումդ ալ չպահես :

14. Խոստումդ պահե

Կին մը՝ իր դրացիին, որ վայրկենաբար պէտք ունէր, փոխ
տուած էր ոսկի մը : Դրացին շատ շնորհակալ եղաւ ու ըսաւ . « Իս-
կապէս ո՛ր օր վերադարձնելս չեմ կրնար ըսել, բայց ապահով ե-
ղիւր, որ պիտի չուշացնեմ եւ այս փոքր պարտքս երբեք պիտի
չմոռնամ » :

Շատ ամիսներ անցան եւ դրացին չխօսեցաւ ըրած այս պարտքին վրայ: Այն ատեն փոխ տուող կինը քաղցրութեամբ եւ շատ պատշաճ կերպով յիշեցուց. « Դրա՛ցիս, ըսաւ, կը յիշե՞ս... դիտե՞ս, մէկ ոսկին որ քեզի այնչափ գոհացուց, այսօր ալ ինծի մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէ »: Բայց դրացին զարմացաւ: « Խնչպէս, ի՞նչ, ինծի երբեք բան մը փոխ տուած չես: Ասկէ զատ՝ ի՞նչ ապացոյց կայ, գրուած բան մը կա՞յ »:

Փոխ տուող կինը շատ վշտացած տուն դարձաւ: Կրկին վըշտացած, որովհետեւ բացի կորուսած ստակէն, ամօթ կ'զգար որ այս դրացին պատուաւոր մէկը կարծեր էր, մինչդեռ ցած եւ ստոր մէկն է եղած, որ իր խոստմանը կարեւորութիւն չէր տար, եւ կը կարծեր թէ բան մը պարտական չէ, քանի որ գրուածը չը կար: Պզտիկ աղջիկներ, թեթեւութեամբ բան մի՛ խոստանաք. բայց եթէ անգամ մը խոստացաք, կատարեցէք ձեր խոստումը:

15. Գեռ գործ մ'ընել մի՛ խոստանաք

Մարիամ անունով սպասուհի մը կը ծառայէր այնպիսի մարդոց քով՝ որոնք մեծ վստահութիւն ունէին իր վրայ: Օր մը, մէկը կուգայ զինք կը գտնէ եւ կ'ըսէ. « Մեծ շահ մը պիտի ունենամ, եթէ տիրուհիդ մէկ թուղթը կարդամ, որ իր սենեակի սեղանին վրան է: Վաղն, այս ինչ տեղը քեզ պիտի սպասեմ. այն թուղթը ինծի բեր: Կարգամ ու անմիջապէս քեզ կը յանձնեմ: Գողութիւն մը չէ ըրածդ, հետեւաբար խիզճդ քեզի յանդիմանելու բան մը չունենար: Կրնա՞մ վրադ վստահ լինել. խոստացիր ինձ »:

Մարիամ տկար էր: Խոստացաւ: Բայց հետեւեալ օրը մեծ խռովութիւն մը, յուզմունք մ'ունեցաւ սրտին մէջ: Պէ՞տք էր իր տիրուհիին վստահութիւնը չարաչար գործածել, թէ տուած խոստումը չպահել:

Այն ատեն իր խղճին ձայնին միայն լսեց, որ կ'ըսէր. « Դու ստիպուած չես խոստումդ պահել, որովհետեւ այդ խոստումն ըրիր գէշ գործ մ'ընելու համար: Ընդհակառակը դուն պարտական ես հաւատարիմ լինել, եւ տիրուհիդ վստահութիւնը չարաչար չգործածել »:

« Այն թղթին մի՛ դպչիր, ոչ ոքի մի՛ տար: Ուրիշներուն գործերը քեզի փոյթ չեն: Հաւատարիմ եւ աննենգ եղիր »: Աւելի լաւ է պատուաւոր լինել, քան թէ աններելի խոստում մը կատարել:

16. Գեռ գործի մը օգնել պէ՞տք է

— Վարդուհիին գրչին տուփը տեսա՞ր, ըսաւ ցած ձայնով Կատարինէ իր բարեկամուհի Մարիամին: Այս առաւօտ շատ գեղեցիկ

գրիչներ կար մէջը. գաղտնի ա՛ռ եւ հատ մ'ալ ինծի տուր :

— Ո՛չ, ըսաւ Մարիամ, չեմ ուզեր, այդ գողութիւն կը լինի :

— Լաւ, կը պատասխանէ կատարինէ, ես կ'առնեմ, երբ դու անոր հետ խօսակցիս : Քիչ մը զբաղեցուր զինք ուրիշ կողմ, որ զիս չտեսնէ :

— Ո՛չ, ըսաւ Մարիամ, որ պատուաւոր պզտիկ աղջիկ մ'էր, չեմ ուզեր քեզի օգնել գողութեան համար : Այն ատեն ես ալ քեզի պէս յանցաւոր կը լինիմ :

Կատարինէ կարմրեցաւ, լռեց եւ խորհեցաւ : Յիշեց այն խօսքերը, որ վարժուհին հազար անգամ կրկնած էր : Պէտք չէ գէշ գործ մ'ընենք և ոչ ալ ուրիշին օգնենք այնպիսի պարագայի մէջ :

Կատարինէին չօգնելով՝ Մարիամ արգիլեց բարեկամուհիին գէշ գործ մը ընելու : Ընդհակառակն լաւ բան մ'ըրաւ, որովհետեւ զգուշացուց իր բարեկամը գէշ աղջիկ մը լինելէ եւ միւս ընկերոջը անիրաւաբար գրիչէ մը զրկուելէ : Մարդ երբեք չափազանց խըղճամիտ չըսուիր, երբ ուղղամտութեամբ չէ կատարած իր գործն :

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

Մ Ս Ք Ը Ս Ո Ք Գ Ը

Սիրքս կրակ ունի, արցունք՝ իմ հոգիս,
Որ կը միայ սեւ սուգին պէս մայրիկիս,
Ո՛հ, մայրիկիս :

Բոյլ մը խորհուրդ միշտ կը զարթուն մէջ գանկիս,
Ցուրտ ու սարսուռն օրերուն պէս մայրիկիս,
Ո՛հ, մայրիկիս :

Հառաչանքիս շանթն ակօսէ խոկն հիփիս,
Տարտալ ըստերն իմ սգաւոր մայրիկիս,
Ո՛հ, մայրիկիս :

Ապրիլ կ'ուզեմ, գունեղ, զըւարթ, գերթ նարկիս,
Դիրք քեւերուն մէջ սգաւոր մայրիկիս,
Ո՛հ, մայրիկիս :

Սեր ու ժրպիտ ծծեն քելերն իմ կեանքիս,
Թունդ պաշտումն, գուրգուրանքն մայրիկիս,
Ո՛հ, մայրիկիս :

Յրգե՛, հոգի՛ս, կենսանիւթ ջիղ տո՛ւր վանդիս,
Բանի քու մէջդ է յոյսն ու կեանք մայրիկիս,
Ո՛հ, մայրիկիս :

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

Ուսուցչիս՝ Եղիշէ Եղիմի. ԴՈՒՐԵԱՆԻՆ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ 19րդ Դարու զաւակն է, իր դարուն երկունքէն ծնած, ու իր ժամանակին պայծառ ու յուզիչ արտայայտութիւնն է, խորունկ անկեղծութեամբ առլցուն: Դարերը միայն կրնան արտադրել նման աչքառու դէմքեր, որովհետեւ Դուրեան պոռթկումն է իր դարուն: Որչափ որ ապրի 19րդ Դարը, հոն պիտի հանդիպինք Պուրեանի՝ իր առաւել կամ նուազ նշուաւորումներով փողփողուն, պահած միշտ իր անկեղծութիւնը, եւ որուն համար էր որ կրցաւ ըլլալ Դուրեան մը: Պարզ է սակայն Դուրեան իր ամբողջութեամբ. եւ մենք սիրած ենք զինքը իր անուշ հեղճնթացութեան համար, եւ սակայն խնդիր է հասկնալ իր պարզութեան մէջ իսկ, որովհետեւ Դուրեան չէ գրած այն պարզութեամբ՝ որոնց կարելի է թափանցել մէկ նայուածքով: Որչափ քննենք անոր թափանցելու հետաքրքրութեամբ, աւելի կը խորունկնայ, ծիածանուած գոյներ կը սառին կախարդուած նայուածքիդ առջեւ անմատչելի կամարներու փակած, ու հոնկէ պիտի նշմարես բուն իսկ Դուրեանը, որ շատ խորունկ է եղեր, խորունկ իր պարզութեամբը: Շատ դժուար է քննել պարզ երիտասարդի մը սիրտը, ի՞նչ գիտնանք. թերեւս իր այդ պարզութեան տակ գուրգուրալի մեծութիւններ կը պահուըտէին, կամ խորհուրդներ՝ շմորող ու խափող:

* *

Գրական շարժումը իրական միջնորդ տը կը ծագի երիտասարդ Դուրեանի ժամանակամիջոցին: Գրականութեան այդ յուզումին մէջ մեծ դէմքեր կ'երեւան, ու Դուրեան մը կը շարժի ամուր, ուժով ու աննահանջ: Եւ սակայն սա ալ եզական քաջութիւն մըն է թէ՛ դարձեալ իր հոգին քանդումին մէջ կը գտնէ մեծագոյն վայելքը, որովհետեւ իր ծագումին մէջ ամէնէն նպաստաւոր յոյսերը ցոյց տուած է: Արդէն իր կեանքը այնքան պարզ է, իր արժանիքը այնքան հոլանի է որ, հոգեկան միջոցները յստակութիւններ կը դառնան, ու բոլոր ճշմարիտ բանաստեղծներուն նման, միշտ փայլուն՝ մեզի կը հասնի ան պերճացած ու մեծցած:

իր կեանք հաւատարիմ նկարագրութիւնն է երազուն հոգիի մը, կենսագրութեան քիչ մը լայն գիծեր պիտի կրնան կարկառել այդ դէմքը աւելի լաւ ու աւելի փայլուն: Լուրջ դաստիարակութենէ մը անցած, թափանցած իր դարուն, ու բանաստեղծ իր չքաւորութեան մէջ:

* * *

Միշտ երազող մ'եղած է Դուրեան, երազողներու էն ճշմարտախօսը ու էն խրոխտը. ու իր խրոխտանքն ալ ինքնայատուկ է, բնածին ու ազդող. որովհետեւ ամէն բան իրական ու լեցուն վայրկեաններու մէջ արտադրած է, խորշելով սուտէն ու կեղծէն:

Զգայնոտ ու երազուն փառաբանութիւններ են իր սիրային ոտանաւորները, ճաշակի հեշտ նրբութեամբ մը հիւսուած ու շաղկապուած մաքուր, ճերմակ, փոյլուն ու թարմ երազանքներով: Բնութեան ամէն երեւոյթ փարած են իր մէջ զգալու էն թարմ կարողութիւնները ու շինած են անոր մէջ զգացում-մարդ մը: Ինչէ՞ր ներշնչեցին արդեօք լեռները՝ որոնց առջեւ ծովերն ու լեռները կը խոնարհին, եւ որ աստուածներու պատուանդանները կը նկատուէին:

* * *

Ինչո՞ւ միշտ կը տրտմի Դուրեան իր տաղերուն մէջ. ինչո՞ւ նըկարած ատեն տրտմութեան երանգներ կը քսէ իր կտաւին վրայ: — Որովհետեւ նախ ինք իր մէջ կը մտնէ, ու դուրս ելլելով կը սկսի ամէն ճգրիտ յարմարութիւններով խօսիլ՝ զարմացած ու հիացքոտ իր զգացումներուն վրայ: Եւ պէտք էր սեւ երանգներ նշմարուէին իր գրութեանց մէջ, որովհետեւ իր կեանքն ալ ցուրտ պատկերի մը պէս կը գծագրուէր՝ աղքատութեան մէջ տարուբեր: Եւ որովհետեւ աղքատութիւնը կը գողնար իրմէն ամէն հեշտութիւն, ամէն փառք ու վայելք. եւ ի՞նչ, իր տաղերն՝ իր կեանքէն քամուած սարսուռներ են: Եւ եթէ Դուրեան աղքատիկ ընտանիքի մը զաւակը չըլլար, պիտի չունենայինք մենք հիմակուան ու ճանչցած մեր Դուրեանը: Ու թերեւս գոյութիւն չունենային հիմակ իր խորագրած նամակները, որոնք « Հիւանդի մը յուշատետր » պիտի կոչեմ, հանճարեղ ու մտասքանչ հիւանդ բանաստեղծի մը:

* * *

Իր պաշտամունքները անեղծ ու անխախտ մնացած են իր մէջ, ու պիտի մնային անեղծ ու կանգուն՝ մինչ ցկատարած աշխարհի, որովհետեւ կարմիրը սորվեր էր աղջկան մը պէս ամէն բանի տուջեւ, ու պիտի խենթ ենար հոգեկան ստորնացումի մը առջեւ եթէ իր մէջ կատարուէր: Բարութիւնը ու արդարութիւնը մշտաշարժ գործիներու կը նմանէին, որոնց անշարժութիւնը կեանքի վատ-

Թարում պիտի գոյացնէր մարդուն մէջ : Մտերմական , ընտանեկան ու նոյն իսկ գրական կեանքի մէջ կը տեսնուին այս ամէնը իր վրայ անարատ գոյնով : Դուրեան լաւ ուսումնասիրած էր կեանքը , իր բոլոր երեւոյթներով , իր ամէն ձախորդութիւններով , ու ինք իսկ զոհ մը կ'ըլլայ անոր կատաղի ու մոլեգին անգըթութեանց :

Հակառակ այս ամէնուն՝ զուարճախօս եղած է պատանութեան ատեն՝ ընկերական կեանքի մէջ : Եւ եթէ քիչ մը զուարճութիւն ալ կ'երեւայ իր Թասրոնին մէջ , ինչ գիտնանք թէ անոնք ալ ցուրտ բարկութիւններէ ծնած ծաղրանքներ չեն՝ դերասանական կեանքը յատկանշող : Դուրեան իր երկու թատերագութեանց մէջ գծած է իր կեանքը : Վարդ եւ Շուշանի մէջ՝ իր սէրը , անոր մաքրութիւնը , սէրի երազուն փառքերը , սէրով աշխարհի դարուններուն մէջ ապրիլը , սէրով իրարու մէջ հալիլը կը մատնանըչ : յետոյ անոր քայքայումին վրայ կը խօսի , որ կեանքի քայքայումն է : Իր Թասրոնը , որուն մէջ ապրող անձերը ինք է ստեղծած , ամէն մէկն ալ իր կեանքին ցուրտ երեւոյթները կը պատկերացնեն , իր սիրտը հագուեցնելով անոնց ու իր զգացումները ներշնչելով : Ինք չէր կրնար ձայն բարձրացնել , պէտք էր որ ձերմակ թուղթին վրայ իր սիրտը ցոլացնէր , եւ իրաւ ալ յաջողեցաւ :

* * *

Երբ նկարելու ելլէ , միշտ կուռ ու թարմ պատկերի մը մէջ պիտի ցոլացնէ անպատճառ անոր է՛ն կարկառուն ու է՛ն հասարակ գիծերը , մխրճելով երեւակայութեան մէջ , ու ներշնչման թռիչի մը մէջ կը խտացնէ անոր բովանդակութիւնը , ուժգնութիւնը , տալով անոր այն կենդանութիւնը որ պարտի հոսիլ իր աչքերէն : Այս պատճառաւ վաղանցուկ չեն անոնց թողած տպաւորութիւնները մեր վրայ որ շատ արագ կ'ըլլայ , որովհետեւ իսպառ կը մոռցնեն ամէն նախանձ , եւ որովհետեւ բոլոր միւսներէն հակառակ ազդեցութիւն կը բանեցնեն իր տաղերը մեր զգացողութեան վրայ , երկար ատեն կը մնան մեր յիշողութեան մէջ , կը տխրեցնեն կամ հեշտութեան սարսուռը կ'անցնեն մեր մէջէն , որովհետեւ Դուրեան ապրումած ճշմարտութիւններ կ'ընդօրինակէ միայն , ու չվարանի իր բացառիկ սարսուռներու վայրկեաններուն փնտռել բառեր՝ գեղեցիկ , հնչուն ու չեշտոտ : Արդէն իրական յուզմունքները զատելով կը շարեն զանոնք իր իմացականութեան մէջ , որ՝ այնքան լայն ու այնքան թարմ է՝ արշալոյսին պէս ու կանաչ՝ գարնան առաջին կանառչներուն նման : Հարկ չկայ մտածելու թէ Դուրեան՝ իրաւ իրաւ այսպէս թրթռուն ու

սահող գրիչ մ'ունեցած է. բաղդատութեան առնենք անգամ մը յանգերը որ ինքնեկ են, պարզ ու իմաստալից, ու կարգազան ուժգնութիւն մը ունին:

* * *

Աւելի աչքառու բան մը կը նշմարուի Դուրեանի հոգւոյն մէջ, եւ իր հոգին վերլուծելու համար պարտինք ըսել թէ՛ Դուրեան յետին վայրկեաններուն մէջ իսկ ձգտած է իր խտէալին, ու բուն իսկ մեռնողը եղած է իր խտէալի ճամբուն մէջ, որուն կրկնութիւնը շատ քիչ է դժբաղդաբար մեր գրական պատմութեան մէջ: Մեռած է ան երազներուն հետ խօսելով ու թուղթերուն վրայ հեւալով, տաղերու մէջ կեանքի է՛ն աղուոր ու է՛ն պահուած կըտորները դիտելով, իր սրտի բաբախումներուն հետ մտիկ ընելով իր գրչին կրակ սահումներուն:

Տեսնեցի, թերեւս բանաստեղծին է՛ն գեղեցիկ ու փայլուն կտորներէն մէկը չըլլայ, եւ սակայն ան՝ շատ խորունկ է ու զգացուած իսկ մահուն բռնկած սարսուռներու ժամանակ: Ինչո՞ւ չէր մոռցած ամէն բան այդ մահասարսուռ վայրկեաններուն մէջ, ու զգալով կեանքի մեծութիւնը՝ կը պոռայ, կեա՛նք տուե՛ք, կեա՛նք. միշտ բարձր անծանօթի մեծութեանց մէջ թաթխած իր գլուխը, ու սիրտը՝ ապրելու հեշտանքովը գինով, գինով իր խտէալին մէջ. ու իր այս հառաչանքը որ տեսակ մը խիտ ամփոփում է, հոգեկան հսկայ ազնուութիւն մը ու քաջութիւն մը կը պատկերացնէ մեր առջեւ:

* * *

Ի զուր քրտնէ հիւանդի մը պէս մտեռանդութեան անբաժանելի երկունքի մը մէջ ինկած՝ ճիշդ ու ճիշդ Դուրեանական ոտանաւոր մը արտադրելու, անկարելի պիտի ըլլար այդ, որովհետեւ Դուրեան խոնարհուն ու բարեպաշտ անկեղծութիւն մը կը ցոլացնէ իր հոյակապ տաղերուն մէջը իր զգացումները կը թարգմանէ ան: Իր բռնկած ու փրփրած զգացումները:


Արդիներս, պիտի չկրնանք արտադրել Դուրեաններ, որովհետեւ արուեստը իր ուժգնութեամբ պլլուած մեզի, միշտ սիրած ենք շողջողունը, ու երբեմն ալ տէքորաններ ըլլալու ձգտումը ունեցած ենք: Որովհետեւ կատաղի փափագ մ'ունեցած ենք ստար հեղինակներով աճիլ ու զարգանալ. դեռ պատանի՝ կարդալ Ստեֆան Մալլարէ, — Ֆրանսացի տէքատան բանաստեղծներու էն ամուր ներկայացուցիչը —, լափել լափիփել զայն, որ ծանր ազդեցութիւններ պիտի բանեցնէր ընթերցողին թարմ մտքին վրայ. ընթերցող պարոնն պիտի սիրէր անոր փայլուն ու աղուոր բառերը: Եթէ մտքի ու տարիքի աստիճաններուն համեմատ վերելա-

կէին հանդարտ գնացքով մը պիտի կարէնայինք այն ատեն Լը Բօնդ տը Լիլի, Բօլ Վէռլէնի եւ Ալֆրէտ տը Վինետի նման բանաստեղծներ ունենալ։ Չգացումով գրած է ամէն բան Դուրեան, եւ ինչէն է որ չեն յաջողիր. զգացումը կը խեղդեն իրենց մէջ, դարձնելով իրենց երազուն նայուածքները աւելի շողշողունին, սեւեռելով մտքերնին մեծ բանաստեղծներու վրայ, եւ կը թոթովեն անդադար անոնց շեշտերը առնելու տենջանքով։ Չգացումիդ խորհուրդ հարցուր ու այնպէս ճամբայ ելիր, ո՛չ թէ մեծ հեղինակի մը աղնուութենէն հմայուած, որուն հետ չես կրնար շափուիլ, Դուրեան ինքնավստահութեամբ ասպարէզ նետուած է, որովհետեւ գիտէր զարդարել իրերը։ Անոր պատկերները կ'երևին բարակ մշուշի մը մէջէն որ թափանցիկ կը դառնայ իրենց նայուածքին անուշութենէն. անոնք մեզի կը հասնին երանգներով պրիսմակուած, փայփայանքով մը լեցուն, կենդանութեամբ բարբառուն ու կը սիրենք մենք զանոնք, որոնք աւելի զգայուն կ'ընեն սիրտը, աւելի հպարտ երեւակայութիւնը ու աւելի յուսալից երազը։

Ո՞վ չէ սարսուցած Տրսնցֆի սուր ու կրակուած շեշտերէն, ո՞վ չէ գինովցած Լնակի տրտում փառքին հմայանքէն։ Ո՞վ առելի երջանիկ պիտի ըլլար ուրեմն, քան այս հուրիններու փաթթուող սիրտը, որուն բոլոր օրերը տրտմանուշ երեւոյթներ են։ Դուրեանի արիւնը կրկնակի բանաստեղծ է։ Քննեցէք Եղիշէ եպիսկոպոս Դուրեանը։

Ատաբազար

ԿԱՐԷՆ



ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

Աղանիին պաշտօնանկութիւնը . — Նորընտիր ցրուիչներ ... օդին մէջ

Ձկնկուլին տրամաբանութիւնը

Ալֆօնս Ալէ, Ժուրնալի սրամիտ քրոնիկագիրը, տեսակցութիւն մ'ունեցած է Ֆրանսացի նաւային տեղակալ Տիւմա տը Պօրբէի հետ, որ երեք տարիէ ի վեր կ'աշխատի օդային ցրուիչի պաշտօնն աղանիներուն ձեռքէն առնելով ձկնկուլներուն (տեսակ մը թռչուն) յանձնել : Մ. Տիւմա տը Պօրբէ սապէս կը պատմէ իր փորձերը : — « Երբ առաջին անգամ ընկերներուս յայտնեցի թէ թղթատարի կարելոր պաշտօնը պիտի յանձնեմ ձկնկուլներու, ամէնքն ալ ծաղրեցին զիս : Բայց ես, առանց յուսահատելու գործի սկսայ : Ձկնկուլի հաւկիթներ ճարեցի եւ թուխսի դրի : Երբ տակաւին փոքր էին անոնք եւ չէին կրնար թռչիլ, թողուցի որ իրենց քէյֆը նային, աւագանին շուրջը պտոյտներ կատարելով եւ ուզած ձուկերնին կուլ տալով : Բայց երբ հասան այն տարիքը ուր այդ փոքր ապերախտները պիտի փախչէին ինձմէ, առանց իրենց մեծարանքն յայտնելու, մետաղեայ պզտիկ թել մը խօթեցի իրենց կտուցին մէջ, եւ կարգաւ դէմս շարելով, ըսի :

— Հիմա, բարեկամներս, երթաք բարով :

Հետեւեալ օրն ի՞նչ տեսնեմ աղէկ . — առջի օրուան փախստականները իրենց այցելութեամբ պատուեցին զիս, անօթի ծաւալ : Իրենց որպիսութիւնը հասկնալէ ետքը թռչնարան հրաւիրեցի զիրենք, մետաղեայ թելն հանեցի. կուշտ ու կուռ ճաշ մը հրամցուցի, մետաղեայ թելը նորէն հաստատեցի իրենց կտուցին մէջ, եւ յետոյ, Ֆրճոս, երթաք բարով : Քանի մը օրուան վարժութենէ ետքը, ձկնկուլները տրամաբանել սորվեցան եւ իրենց միտքը դրին որ օդին մէջ պարապ պտըտիլը փոր չի կշտացներ, ուստի կերածնին մարսելնուն պէս, իրենց այցելութեամբ կը պատուէին թռչնարանն ուր ճոխ հացկերայթ մը կամ բուն բառով, ձկնկերայթ մը պատրաստ կը գտնէին միշտ : Այսպէս, տուն տեղ ըլլալու ճաշակը տուի ասոնց : Յետոյ բոլոր ձկնկուլներս ամուսնացուցի եւ առաջ բերի տեսակ մը որ օդին մէջ պտոյտ մ'ընելէ ետքը տուն դառնալու բնագոյնն ունեցաւ : Գալով ճամբան դիւրաւ գտնելու կամ չմոլորելու խնդրին, ձկնկուլն այս մասին աւելի վարժ է քան ամէնէն վարպետ աղանին » :

Մ. Տիւմա Պօրբէ մտադիր է ի մօտոյ իր ձկնկուլներն արձակել իրազատական Ովկէանոսին մէջտեղը :

Ժ. ԵՐԻՍԿԱՅԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵԹՈՏՆԵՐ⁽¹⁾

ԱՐԻՍՏԱԿԷՍ Ե. ՊՈՅԱՃԱՆ

Ամէն ուսուցման մէջ ուսուցիչը, նոր սկսելու ատեն շօշափելի, զգալի իրեր կը ցուցնէ եւ անոնց վրայ կը խօսի. տղոցը առջեւ թանձրացեալ առարկաներ կը դնէ, եւ յետոյ կամաց կամաց այդ թանձրացեալ եւ շօշափելի իրերուն ընդհանուր եւ վերացական գաղափարը կազմել կուտայ անոնց ու հետզհետէ տղաքը բաղդատելու, ընդհանրացնելու, դատելու կը վարժեցնէ:

Ուրեմն նախնական ուսուցումը տղուն ուշադրութեանը, դատողութեանը եւ մտքին ինքնատիպութեանը կոչում ընելուն մէջ կը կայանայ:

Անիկա էապէս յայտնատեսիկ (intuitif) եւ գործնական (pratique) է: Յայտնատեսիկ ըսի, որովհետեւ ամէնէն առաջ տղուն ողջմտութենէն եւ ակներեւութենէն կը սկսի:

Անիկա կը կռթնի բնածին այն կարողութեան որ տղան առաջին անգամ մէկ ականարկ մը ձգելուն կ'ըմբռնէ, առանց ապացոյցի, պատճառաբանութեան. բայց ո՛չ թէ բոլոր ճշմարտութիւնները կ'ըմբռնէ այդ նախնական տեսութիւնովը, հապա իրերուն ամէնէն գլխաւոր, պարզ եւ հիմնական ճշմարտութիւնները ու երեւոյթները:

Գործնական՝ այսինքն այդ ուսուցումը իր մտքին տեսողութենէն բնաւ չի հեռացներ սա ճշմարտութիւնը թէ, նախնական վարժարանի մը տղաքը սնամէջ վիճաբանութիւններով, գիտական խորունկ հմտութիւններով. սքօլաստիքական հետաքրքրութիւններով ժամանակնին պէտք չէ վատեն. արդէն տարրական վարժարանի տղայ մը ամէնը հինգ կամ վեց տարի ունի, ուստի անոր պէտք է տալ այնպիսի գաղափարներ, զգացումներ, տեղեկութիւններ որ, վարժարանէն երբոր դուրս ելլէ եւ կեանքի մէջ մտնէ անմիջական պէտք մը կը զգայ այդ գաղափարներուն, եւ մանաւանդ տղան դնելու է այն վիճակին մէջ, ուր արդէն անկէ ետքը իր ստացած գաղափարները, մտաւորական պաշարը կրնայ պահել եւ ընդարձակել. մէկ խօսքով դպրոցական այդ շրջանին մէջ տղան միմիայն կեանքին համար պատրաստուելու է:

Այս կրկին պայմաններով է որ նախնական ուսուցումը կը

(1) Շարունակութիւն 3 թիւէն

կատարուի մտքին մշակութեանը եւ զարգացմանը վրայ: Կրնանք ըսել որ բնութիւնն է որ կ'առաջնորդէ անոր: Այս կրթութիւնը զուգահեռաբար կը մշակէ իմացականութեան զանազան կարողութիւնները: Դատողութիւնը կը կրթէ տղան դատել տալով, զննողութեան ոգին կ'արթնցնէ տղուն մէջ անոր զննել սորվեցնելով, վերջապէս տղուն տրամաբանութիւնը կը կրթէ անոր ինքնիրենը տրամաբանելու վարժեցնելով, առանց նախապէս մեքենական չոր կանոններ սորվեցնելով:

Վերոյիշեալ պայմաններով կատարուած ուսուցումը, որ պարզապէս եւ զուտ մտքին բնական կարողութիւններուն վրայ հիմնուած է, եւ բո՛ւն գիտական բարձր ուսումէ մը զուրկ է, ինչպէս ըսինք այդ ուսուցումը աւելի փոքր տղոց կամ հասարակական եւ տարրական կրթութեան կը վերաբերի:

Այս տեսակ ուսուցումը պէտք է կատարուի ո՛չ թէ նուազ թուով տղոց վրայ, դասարանի տղոց միմիայն մէկ մասին վրայ. հապա հաւաքական եւ մեծ թուով տղոց վրայ: Այն տեղ ուսուցումը հաւաքական է եւ միեւնոյն տօտէն ամէնուն ալ կ'ուղղուի. ուսուցիչը դասարանին զարգացման աստիճանը ս'չ թէ մէկ քանի տղոց աշխատութենէն պէտք է հետեւցնէ, հապա ընդհանուր դասարանին տղոցը կարողութենէն:

Թէպէտեւ դասարանին տղոցը մէջ թէ՛ աշխատասէրներ եւ թէ՛ յետադէմներ կը գտնուին, սակայն միջին հաշուով minimum մը կայ, այդ minimumէն կը հասկցուի ուսուցչին թափած յոգնութիւնները. այո՛, ուսուցիչը կրնայ անոնց մէջ գտնուող առաջացող, աշխատասէր տղաքներով ալ չափով մը պարծենալ, սակայն իր բուն կարողութիւնը դասարանին ընդհանուր մակարդակէն կախում ունի:»

3. — Մեթոտը իր ստուգաբանութեանը համեմատ *savoir* ֆօմբայ կը նշանակէ, մանկավարժութեան վրայ կիրարկելով այդ բառը, կը նշանակէ, ճշմարիտը սորվեցնելու ճամբան: Արդ ասկէ պէտք չէ հետեւցնել որ այդ նպատակին հասնելու համար մի միայն մէկ ճամբայ մը կայ:

Շատ մը մեթոտներ կան, ամէն մէկը իր առաւելութիւններուն հետ, անպատեհութիւններն ու սխալներն ալ ունի. կայ որ այսինչ ուսումին կը յարմարի եւ այնինչին չյարմարիր:

Նախ քննենք Յայտնատեսիկ մեթոտը.

Յայտնատեսիկ (*Intuitive*, Լատիներէն *intueri*), նայիլ, տեսնել) կը նշանակէ. այսինքն իրերը մեր զգայարանքներովը եւ մասնաւորաբար մեր տեսանելիքով կը տեսնենք, կը ճանչնանք: Օրինակի համար տրուած ըլլայ սա նիւթը, ի՞նչ է շրջանակը. փոխանակ բերանացի եւ երկրաչափական վերացական սահմանը

տալու, սեւ տախտակին վրայ շրջանակ մը կը գծեմ: փոխանակ ըսելու թէ շրջանակը կըտր եւ գոց գիծ մըն է, որուն ամէն կէտը ներսը գտնուած մէկ կէտէ մը հաւասարապէս հեռու են, այդ կէտին ալ կեդրոն կ'ըսուի. փոխանակ այսպէս ըսելու՝ շրջանակաձեւ առարկաներ կը ցուցնեմ անոնց. ինչպէս խողովակին բերանը, ժամացոյցին սկաւառակը, կամ թէ իրենց հագուստին վրայ գտնուած կոճակները:

Այս կերպով առաջին անգամ շրջանակին վրայ բաւական յստակ գաղափար մը կը կազմէ իր մտքին մէջ:

Թէեւ այդ առարկաները շատ ճշգրիտ եւ խորունկ ծանօթութիւնը չեն տար տղուն շրջանակի վրայ մը, բայց տղոց տարիքին համեմատ աւելի կ'ստարեալ եւ լայն բացատրութիւններ կ'արելի է տալ:

Ինչպէս քիչ մը առաջ ըսինք ինչ ինչ առարկաներ ցուցնելով, տղաք առաջին տեսութեան կրնան գաղափարը կազմել շրջանակին, սակայն շատ պարզ եւ վերի վերոյ է. շատ ճշգրիտ չէ այդ ծանօթութիւնը:

Մանաւանդ այս անպատեհութիւնը մասամբ մը կրնայ ներուիլ երբոր շատ պզտիկ տղոց կը դասախօսուի. ինչու որ շատ տարրական եւ գլխաւոր ծանօթութիւն մըն է որ պիտի ստանան անոնք: Այս հարեւանցի տարրական տեղեկութիւնները կամ ծանօթութիւնները յարմար են տղոցը տարիքին. իսկ այս տարրական եւ հարեւանցի ծանօթութիւնները աւելի յաջորդ տարիներու մէջ աւելի խոր եւ ամբողջական կրնան ըլլալ, որովհետեւ տղուն տարիքը կը ներէ այն ատեն:

Ասկէ զատ յայտնատեսիկ մեթոտը այն անհուն առաւելութիւնը ունի որ անով տղոց միտքը կը հարստանայ, կ'ընդարձակի առանց ճիգի եւ դժուարութեան. նոյնպէս այս մեթոտով ուսուցումը տղոցը աչքին հաճոյալի կ'ըլլայ, ինչու որ անոնց զգայարանքներուն կը խօսի եւ կը սիրցնէ անոնց ուսումը, առանց անոնց տարիքին հակառակ մտքի յոգնութիւններ, դժուար հասկացողութիւններու ենթարկելու:

Դարձեալ, յայտնատեսութիւնը միթէ ամէնէն յարմար եւ միակ միջոցը չէ՞ տղոցը չգիտցած բաները սորվեցնելու, անոնց առաջին տարիներուն մէջ չտեսած անծանօթ իրերու վրայ յստակ եւ որոշ գաղափար մը կազմել տալու:

Միթէ պատկերաւոր կենդանաբանական այրենարանին շնորհիւ չէ՞ որ, փիղը, լւղտը, առիւծը իրենց պատկերներովը ընտանի դարձած են: Նոյնպէս, զանազան պատկերներով գիրքերու միջոցով չէ՞ որ տղաք իրերուն տարբերութիւնները կ'ըմբռնեն,

օրինակի համար, նաուռ մը եւ նաւակին մէջ եղած տարբերութիւնը. դարձեալ, չէնքի մը եւ գեղջկական խրճիթի մը, գիւղի մը կամ քաղաքի մը զանազանութիւնները տեսնել:

Այս կերպով, աշխարհագրութիւնը իրերուն պատկերաւոր ներկայացումներէն մեծ օգուտ կրնայ քաղել. օրինակի համար հրաբուխի մը, հրուանդանի մը, ովկէանոսի մը կամ գիւղական տեսարաններու պատկերները ցուցնելով, կամ թէ այլեւայլ երկիրներու բնակիչներու դէմքի, հագուստի, հասակի զանազանութիւնները պատկերներով ներկայացնել: Աշխարհագրութեան հետ քարտէսաշինութիւնը միթէ յայտնատեսիկ մեթոտին կիռարկումը չէ՞:

(Շարունակելի)

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

(Ա Ի Ա Ն Դ Ա Վ Է Պ)

Ժամանակաւ մարդ մը կար: Իր քաղքին մարդիկը զայն կծծի կրեսոս մը սովոր էին կոչել: Ողորմածութիւնը խենթութիւն կը դաւանէր եւ ինք անողորմութեան ջերմ պաշտպան մ'էր:

Ձմրան ցուրտ օր մը, արեւը հորիզոնէն միայն ցանցառ ճառագայթներ սփռած էր երկրիս վրայ: Քաղքին մուրիկները ժողվուած պատի մը տակ կը խօսուըռտէին: խօսակցութիւննին կծծի հարուստներուն շուրջ կը դառնար: Յանկարծ կծծի հարուստի մասին խօսք մը բացուեցաւ եւ բոլորն ալ անկէ ջնջին բան մը առած չըլլալնին պնդեցին: Աղքատներէն զուարճախօս մէկը կատակի համար ըսաւ « Եթէ ես այսօր այդ հարուստէն բան մը առնեմ ինծի ի՞նչ կուտաք »: Այն ատեն բոլորը վստահ անկէ բան մը չի կրնար առնելուն՝ իրենց մէկ օրուան մուրացկանութեան արդիւնքը տալ խոստացան անոր՝ եթէ յաջողէր:

Աղքատն ելաւ գնաց անողորմ հարուստին տանը դրան առջեւ կեցաւ եւ մէյ մըն ալ տեսաւ որ ան հացի նկանակներով լեցուն զամբիւղ մը առած կուգայ. երբ աղքատին մօտեցաւ, անիկա իր սովորական բանաձեւերէն աւելի կեղծ գովեստներ եւ ածականներ շալկեց անոր՝ ձեռքի հացերէն մէկը իբր ողորմութիւն ընդունելու համար, ու երբ տեսաւ որ հարուստը անտարբեր դուռը բանալով կը բանայ, այն ատեն մուրիկը հարուստին վերարկուն քղանցքին կը փաթթուի եւ շողոքորթիչ ածականներու յանկերգ մը կը սկսի: Յետոյ հարուստը բարկութենէն յօնքերը պռստեց և աչքերէն կայծեր կը ցայտէին կարծես: Շուրջը կը նայէր բանով մը հարուածելու համար մուրիկը, սակայն բարեբաղդաբար բան

մը չի գտաւ զարնելու, այն ատեն բարկութենէն աչքերը դուրս ինկած, զամբիւղէն նկանակ մը առնելով՝ աղքատին նետեց. ան ալ « Շէն մնա » ի խեղկատակ ճիչ մը արձակելով դէպ իր ընկերներուն կողմը վազեց, ցցուց անոնց նկանակն ու երդում ըրաւ որ այս հարուստէն առած էր:

Ամէնքն ալ զարմացան, եւ ըրած խոստումնին յարգեցին, իրենց օրուան մը շահը տալով անոր:

Ամասիա

Յ. Ն. ՆԻՈՂՈՍԵԱՆ

ՃՈՆ ՔԻՑ ԵՒ ԻՐ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐԸ

1795—1821

(Շարունակութիւն Յրդ Թիւէն)

Սոյնօրինակ հայեացներով այս նկարիչը Լէյկ Հընդի չափ չի կրցաւ ներգործել Քիցի վրայ, բայց Պարթէնոնի քանդակագործութեանց ճաշակը տուաւ անոր, Յունաստանէն Լորտ էլճինի բերած արձաններուն վրայէն: Հեղինական արձանագրութեան արժէքը անգլիական մատենագրութեան արժէքը անգլիական համայնքին յայտնելուն մէջ կը կայանար Հայտընի իրական արժանիքը: Պէտք չէ մոռնալ նաեւ որ Քիցի Նոր-Հեղինագրութեամբ ուստնելուն ու գրելուն պատճառներէն մէկն ալ այս նկարիչն էր: Ինչպէս վերը դիտել տուինք, Քից անձնակամ մնալ ուզեց եւ երբ այդ արմատացած հաւատքը խախտելու ո՛ր եւ է հոսանք զինքը պաշարէր, ոգւով չափ կ'ընդդիմանար: Այս նկարագրին յայտնի հետեւանքն է, երբ 1817ին շատ անգամ Շէլլիի հանդիպելով երբեք իսկ անոր կարեւորութիւն չտուաւ: Կարծես Սրէնսէրէն ու իրմէ զատ մեծ բանաստեղծ չէր ընդունէր: Քից իր բարեկամներէն խրախուսուած հրատարակեց Քերդուածները, անոնց կցելով իր անունն ալ: Դժբաղդաբար գիրքը ընդունելութիւն չգտաւ: Անհարկի է զարմանալ այս անյաջողութեան վրայ. քանի որ կ'ապրէին Թոմաս Մուր, Սքոթ եւ Պայրըն: Անգլիա իր աչքերը Քիցի յառելու պէտքն անգամ չզգաց: Այս երեւոյթը գրականութեանց պատմութիւններուն յատկանշանական մասն է: Ըստ որում, երբ տիեզերահռչակ հանճարներ կը խնկուին համայնքներէն, նորածին հանճարը ժայռուտ դժուարութեանց կը բաղխի: Այս բաղխումը կորովի տէր հանճարի համար յուսահատութեան դառն աղբիւր մը առաջ բերելէ աւելի, յարատեւութեան ու կամքի բեղուն գե-

գետին մը կը բանայ անոր առջեւ, ինչ որ եղաւ Քիցի համար: Յուսահատութեան նշոյլն իսկ չտալով սկսաւ կրկին թափով աշխատիլ, բայց որպէս զի իրեն համար կարեւոր լռութիւնը միջոց գտնէ Ուայթ կղզին մեկնեցաւ: Այդ օրուրնէ ինքզինքը նուիրեց բանաստեղծութեան, եւ ինչ որ բանաստեղծութեան անունը չէր կրէր կը տարամերժէր: Ուայթ հասնելուն պէս կը գրէ իր քերթող բարեկամին՝ Րէյալտսի. « Կ'զգամ թէ ա՛լ չեմ կրնար քաշուիլ բանաստեղծութենէն: Օրուան ամբողջ կէսը ինծի չի բաւեր — ամբողջ օրը ինծի պէտք է, քիչով սկսայ, բայց ունակութիւնը լէվիթան մը ըրաւ: Քիչ մը ժամանակէ ի վեր բան մը չի գրելուս համար կը սարսռամ: Սօցնէն ինծի՝ բարիք մ'է: Անով վերջին գիշերը լաւ քուն մը քաշեցի: Սաիայն, այս առտու աղէկ չեմ, յեղակարծ էնիմիոնս ձեռք կ'առնեմ, զոր կը յուսամ թէ ձեր հոս ժամանելէն առաջ քիչ մը յառաջ տարած կ'ըլլամ»: Իր վրայ գըրուածները կարդացող մը նմանօրինակ թղթակցութիւններու շարք մը պիտի տեսնէ, ամէնքն ալ նոյն տենդոտ չեղտով ուրուագրուած: Բանաստեղծութիւնը իր միակ մոլութիւնն էր. աստուածային մոլութիւն մը, որմէ հոգեով մարմնով վարակուած էր Քից, իր դաւարող տարիներուն մէջ, իր երկու եղբայրները զինքը քաջալերեցին թէ՛ նիւթապէս եւ թէ բարոյապէս, որով 1817էն մինչեւ 1818ի առաջին կէսը անդուլ կերպով աշխատեցաւ. Ուայթը թողելէն յետոյ յաջորդաբար անցաւ Մարկէթ, Քէնթըրպըրի, Հէմբըրթէդ, Օքսֆորդ, Պըրֆօրդպրայճ, Թայկընմութ և Հէյլիթ. վերջապէս աւարտեց էնիմիոնը, զոր 1818ին դարնան հրատարակեց: Տարիուկէս անդուլ ճգնելէ ետք, գլուխ հանած գործին, որ դիցանոյշներու մոգիչ աչքերուն տպաւորութիւնը կ'ընէ ընթերցողին վրայ, քննադատը կ'ըլլայ դժուարահաճն Քից. իր բարեկամներէն մէկուն գրած սա նամակին մէջ.


« Քերթուածիս մասին շատ միջակ կարծիք մը ունիմ եւ զանի ծայրէ ծայր նորէն աչքէ պիտի անցնէի, եթէ նիւթէն յոգնած չըլլայի, եւ եթէ իմ ժամանակս աւելի լաւ գործածելու չմտածէի յառաջիկայ ամառ գրելով ուրիշ կեղծիք մը, զոր միշտ աչքի առջեւ ունիմ: Հոռոմ մէկ օրուան մէջ չէ շինուած: Այս ամառուան աշխատութենէս սպասած արդիւնքս փորձառութեան պտուղն է, զոր կը յուսամ թէ պիտի քաղեմ յառաջիկայ քերթուածէս »:

Այս նամակով Քից կը խոստանայ աշխատիլ աւելի փորձառութեամբ, որուն պէտքը անհրաժեշտ կերպով զգալի դարձած էր: Իր հզօր երեւակայութիւնը էնիմիոն մը երկնելէ ետք կը խոստանար հրաշակերտ մը, դասական բառով գլուխ գործոց մը ընձեռել Անգլիոյ: Հրապարակաւ ուրիշներու չէր յայտնէր իր կար-

ծիքները, այլ բարեկամի մը, որ կրնար կշռադատել զանոնք: Բարեկամներու յայտնած դիտողութիւնները իրեն համար ընտրելագոյն քննադատութիւններն էին ապահովապէս: Ալ աւելի կը ճըշգրտուի հանրութեան դէմունեցած արհամարհանքը Հայտընի ըրած սա մէկ յայտարարութեան մէջ: «Հանրութեան առջև խոնարհելու ամենադոյզն զգացումն իսկ չունիմ, բաց ի Յաւիտենական էակէն, գեղեցկութեան սկզբունքէն և մեծ մարդերու յիշատակէն: Արգելք չունիմ ինծի թշնամի նկատելու հասարակութիւնը, որուն առանց ունէսոսխութեան զգացման չեմ կրնար դառնար: Եթէ խնդիրը հասարակութեան մեծ ծառայութիւն մը մատուցանելու վրայ է պիտի ցատկեմ Եանայէն. կ'ատեմ ամէն անիմաստ ժողովրդականութիւն»: Բիցի այս հայեացները արուեստի տեսակէտէն առնելով իր ժամանակակիցներուն քով կը գտնուին: Այս ժամանակամիջոցի բանաստեղծները, իրենց տարամերժող եսին մէջ թառած, ուրիշը չեն մտածեր, մէկ խօսքով ժողովրդականութիւնը ստորնանալ կը նկատեն: Հրաշակերտներ կը դարբնեն իրենց լուռ մենութեան մէջ, հեռու բազմամիոյս ժխորներէ. բնութիւնն է իրենց Ողիմպեան մոտան, որուն բնապաշտ աչքերը ժխորալից քաղաքներու մէջ լուսով կը ծածկուին: Բիցի իր Էնսիմիոնի մասին կը գրէ. «Գիտնալով այս քերթուածը գրուելուն եղանակը, առանց վիշտի զգացման չէ՝ որ 'ը հրատարակեմ պայն: Ինչ որ ես ըսել կ'ուզեմ՝ խիտ յստակ պիտի ըլլայ ընթերցողին համար, որ չի կրնար թերանալ հոն՝ մեծ անփորձութիւն մը դիտել տալուն մէջ, հասունութեան մը պակասը եւ բոլոր այն թերութիւնները որոնք լիակատար գործ մը բնորոշելէ աւելի տենդագին փորձ մը կը յատկանշեն»: Այսպիսի սկսնակի մը երկչոտ գրիչէն վայրկենապէս թռած չքմեղացնող տողեր, որոնք Էնսիմիոնին յառաջաբանը կը կազմեն. ցոյց կուտան մեծ բանաստեղծին համայնքներէն ընդունուելու մասին ունեցած կասկածանքը, որ շատ չանցած իրականութիւն կը գտնէ: Իր կարկառուն տկարութիւնները սա՛ հոգեբանական հետազօտութեան բնութիւնը ունեցող ջատագովականին մէջ ի յայտ կուգան, «Տըղու մը երեւակայութիւնը առողջ է, մարդու հասուն երեւակայութիւնն ալ առողջ է. բայց կեանքի վայրկեան մը կայ, այս երկու սահմաններուն մէջ, ուր հոգին կը խմորուի, ուր նկարագիրը դեռ կազմուած չէ, ուր փառասիրութիւնը աչք կը շլացնէ»:

(Շարունակելի)

ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ





ԻԺԵՐՈՒ ՈՐՍՈՐԴԻՆ ՄԱՂԸ

Բարիզէ շատ հեռուն երթալու պէտք չկայ գտնելու համար՝ Ծօնթէնէպլօի մէջ իսկ՝ Հիւսիսային Ամերիկայի թաքուն անտառներուն վայրի գեղեցկութիւնը։ Նեղ, երկար բլուրներու շարքեր՝ 60 մէթր բարձրութեամբ՝ կը շրջապատէին աւազուտ դաշտեր ուրոնց մէջ կ'աճին հսկայ կամ վտիտ, բարձրաբերձ կամ գաճաճ ամէն տեսակ ծառեր, իրարու քով սեղմուած եւ տերեւներն ու ճիւղերն իրար գրկած։

Ծօնթէնէպլօի հողը բնաւ վաղող ջուր մը կամ աղբիւր մը չունի. անձրեւին ամբողջ ջուրերը կը ծծուին աւազուտ գետինէն. ասոր համար է որ թռչունները բնաւ հոն չէին թռտեր, մինչդեռ սողունները գունդադուռնդ կը բնակէին խոնաւ շուքին տակ գաղջ վայրերու մէջ։ Ասկէ քսան երեսուն տարի առաջ, մարդեր կային որոնք այդ տեղերէն իժեր որսալով օրապահիկներն կը ճարէին։

* * * Օր մը բարեկամի մը հետ, որ այդ տեղերը շատ աղէկ կը ճանչնար, կը պտտկէինք անտառին մէջ երբ սովորական ճամբէ դուրս տեղ մը հիւղակի մը առջեւ հասանք։

— Ասիկա, ըսաւ բարեկամս, իժերու որսորդի մը բնակարանն է։

— Ծառայ եմ, պարոններ, ըսաւ հաստ ձայն մը, և բարձրահասակ մարդ մը, գրգռեակներ հագած, թանձր ու չափաւորուած մօրուքով, երեւցաւ դրան առջեւ։ Ներս հրամանեցէք քիչ մը յոգնութիւն առնելու։

Աւելի հետաքրքրութենէ քան հանգստանալու փափաքէ մը տանք այս որջին մէջ։ Մէկ անկիւնը ձգուած չոր մամուռէ անկողինէ մը եւ փայտէ տձեւ սեղանէ մը զատ ուրիշ կահ կարասի չկար հոն։ Պատէն կախուած կոտրտած հրացան մը կը ցուցնէր թէ հիւրընկալնիս գաղտնորութիւնն ալ իբր արհեստ մը կ'ընդունէր

Բարեկամս հարցուց թէ օձերէն բաւական բան կը շահի՞։ Մօտուի — այս էր իժորսին անունը — պատասխանեց թէ իժերը երթալով կը քիչնան։

— Դեղագործ մը քսան իժ ապսպրեց ինծի. քանի օրէ հազիւ տասերկու հատ կրցայ ճարել, սա փայտէ մեծ ամանին մէջ դրուած են՝ ամէնքն ալ ողջ. երբ ութը հատ եւս գտնեմ, անմիջապէս յաճախորդիս պիտի տանիմ։

Մօտուիի այս խօսքերը սարսուռ տուին ինծի. ի՞նչ, տասերկու իժեր կ'ապրէի՞ն քովս դրուած տակառիկին մէջ ... Բարե-


կամիս թեւէն քաշելով դուրս վազեցի այդ սոսկալի տեղէն: Ա՛լ միտքս պղտորեցաւ. ամէն մէկ քայլիս իժ մը տեսնել կը կարծէի. բարեկամէս խնդրեցի որ պտոյտնիս վերջացնենք, եւ մինչեւ որ սենեակէս ներս չմտայ չկրցայ հանգիստ շունչ առնել:

Ամիս մը ետքը տեղական թերթի մը մէջ հետեւեալը կը կարդայի.

« Երէկ սոսկալի պատահար մը տեղի ունեցաւ Ֆօնթէնէպլօի անտառին մէջ: Մօտուի անուն իժորսը, որ քաշուած կ'ապրէր, մեռած գտնուեցաւ իր խրճիթին մէջ մարմինը շրջապատուած ու խածատուած իժերէ: Այս մարդը, որ օձերը ողջ բռնելով կը ծախէ եղեր, զոհ գացեր է իր անխոհմութեան: Կ'երեւի թէ գիշերը՝ իր շունը բանալով ամանին կափարիչը, ուր կը պահէր այդ վտանգաւոր սողունները՝ իժերը դուրս ելեր ու իրենց թըշնամին վրայ խուժեր են:

« Թշուառին շունը որ նոյնպէս թունաւորուած էր, մեռած գտնուեր է ուռած ու նեխոտած »:

Բարեկամէս յատուկ նամակ մը կը հաստատէր այս սոսկալի դէպքը: Խեղճ որսորդ:



ԱՇԽԱՐՀԻՍ ՆՇԱՆԱԻՈՐ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ

ՍԿԻՋՔԷՆ ՄԻՆՉՅԻ ՄԵՐ ՕՐԵՐ

Ֆլաման, Հոլանդացի եւ Գերման նկարիչներ

Վան Տայֆ. — Ֆլաման, ծնած Անվէրսի մէջ 1599ին, մեռած



ՎԱՆ ՏԱՅԲ

1641ին Լոնտոնի մէջ: Պատմական սեռի եւ կենդանագրի համար նշանաւոր նկարիչ: Իր դիւցազները Ռիւպէնսինին չափ հասարակ գործեր չեն, բայց իր վարպետին հարուստ յղացումն ինք չունի: Շատ դիւրութեամբ նկարած է անհամար կենդանագրեր, առանց սակայն զգացումի արտայայտութիւն մը դնելու անոնց գիմագծերուն վրայ: (Գործեր, Ս. Սերաստիան, Փշեայ պսակազարդում, Յիպուս խաչին վրայ, զանազան կենդանագրեր):

Նկարներ արտադրելու մէջ խիստ յաջողակ : Սուր դիտողութիւն մը և նկարուածքին մէջ շատ սրամտութիւն ունի : (Գործեր՝ Ծխողը, Գիւղային հարսնիք՝ գինետան մէջ, Ս. Անդուանի փորձութիւնը) :

Ուխտաւ. — Հոլանտացի, ծնած Հաարէմի մէջ 1628ին, մեռած 1682ին : Նկարելու արուեստին գործնականին մէջ գուցէ Հօպսմայի չհաւասարի, բայց մէկ հատիկ է Հօլանտայի տմոյն-բնութիւնը, գիւղանկարներու մենութեան զգացումը արտայայտելու մէջ՝ երբ ամէն բան գոյն է եւ ձեւերը գրեթէ կ'անհետին :

Մէյսթեր-Հօպսմա. — Հոլանտացի, ծնած 1638ին Ամստերտամի մէջ, մեռած 1700ին : Ամէնէն ճարտար, ամէնէն գիտուն նկարիչներէն մէկ Հոլանտայի արեւուն : Դաշտանկարները շատ յաջողուած են :



ՌԱՄՊՐԱՆ

Ռամպրան. — Հոլանտացի, ծնած 1606ին Լէյտի մէջ, մեռած 1669ին Ամստերտամի մէջ : Երանգներու համար գերագոյն վարպետներէն մին : Շուքի եւ լոյսի հակադրութեամբ՝ պատկերներուն կենդանի յայտնութիւն մը կուտար : Կ'ըսէր թէ՝ նկարի մը մէկ ութերորդը միայն լոյսի բաժին ձգելու է : Ո՛չ մէկ կանոնի, ո՛չ մէկ ընդունուած « կերպի » հետեւելով յաջողեցաւ իր անսպառ ինքնատիպութիւնով հասնիլ յաջող արդիւնքին : (Գործեր՝ Էմմաիւսիութաւորները, Թօպի և իր ընտանիքը) :

Թեմիե. — Ֆլաման, ծնած Անվէրսի մէջ 1610ին, մեռած Պրիւքսէլի մէջ 1694ին : Տնական ներքին տեսարաններու, գինովներու, ծխողներու գուեհիկ

Իսալացի նկարիչներ

Սիմապիւէ. — Ծնած Ֆլորանսի մէջ 1240ին, մեռած 1300 (կամ



ՍԻՄԱՊԻԷ

1310ին)։ Իտալական արուեստի վերածնութեան մէջ, փառքի արժանի առաջին անունը։ Իւղոտ ներկերը դեռ ծանօթ չըլլալուն՝ ջրաներկով նկարած է։ Իր գործերուն մէջէն Բիւզանդական տիպարները արտաքսուած են եւ անոնց տեղ կը տեսնուի հեղինակութիւն մը, լայնօրէն յղացուած, բայց առանց ներդաշնակութեան եւ սահունութեան։ (Նշանաւոր է Կոյսն ու Յիսուս)։

Ճիօքքօ. — Ծնած Վէսթրինեանօի մէջ 1266ին, մեռած Ֆլուանսի մէջ 1337ին։ Իր վարպետին՝ Սիմապիւէի ստեղծող ոգին ժառանգած եւ անոր յաջորդն եղած է։ Իր գործերուն մէջ գիծերը այլ եւս չունին առաջինին թեքութիւնը եւ կոշտութիւնը. վայելչութիւնն ու իրական եւ մարդկային արտայայտութիւնը ծնունդէն իր վրձինին տակ։ Յաջողած է բաւական նմանող կենդանագիրներ նկարել։

Անսրէ Օրֆանեա. — Ծնած Ֆլորանսի մէջ 1308ի տասնները եւ մեռած՝ 1368ին։ Իտալիոյ մէջ տեսնուած բազմակողմանի հանճարներէն մին։ Միանգամայն թէ՛ նկարիչ, ճարտարագէտ, քանդակագործ եւ թէ բանաստեղծ, Բոլորովին հակառակը Ճիօքօի գաղափարներուն։ Ինք կը նախընտրէր հին ոճը՝ կոշտ տիպարներով, անհեթեթ եւ բրտօրէն յուզիչ յղացումները։ Տանթէի ոգեցնոր երազանքներովը տոգորուած՝ տիուր պատկերներ նկարած է ոգիի բռին, իր բարեկամները արքայութեան մէջ զետեղելով, ու հակառակորդները դժոխքին մէջ։

Թարգմ. ԶԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հայ Բարձր Դասակարգը իր կարեւոր մէկ անդամը կը կորսընցնէ ԳՐԻԳՈՐ ԷՖ. ԵԱՂՈՒՊԵԱՆԻ մահովը (Թոռ՝ Նշանաւոր Եաղուպ Ամիրայի)։ Արդէն, յուզարկաւորութեան միջոցին՝ որ կատարուեցաւ անցեալ Զորեքաբթի օր. Գեր. Հմայակ Եպիսկ. իր դամբանականին մէջ, խօսելով հանգուցեալին անբասիր կեանքին վրայ, շեշտեց մանաւանդ այն անհուն հոգը զոր տարած էր իր զաւակներուն կատարեալ ու բարձր դաստիարակութեան համար։

Գրիգոր ԷՖ. ի մահը անլնելի պակաս մը կը թողու իր ընտանիքին, ու բոլոր զինքը ճանչցողներուն յիշատակին մէջ։

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐԸ


«Ո՛ւր կը սահի արագ այս ջուր
 Ինչպէս հոսի գետակն մաքուր .
 Օր մը իր մօր կ'ըսէր տղան :
 Այս եզրին վրայ սիրուն այնքան
 Ուր իր մեկնիլն կը տեսնենք մենք
 Վերադարձն ալ պիտի տեսնենք :»

«Ո՛հ, ո՛չ որդեա՛կ, ակէն հեռո՛ւն
 Այս գետն սահի, փախի անվերջ ,
 Եւ այս աշին իր վազիկն մէջ
 Պատկերն է մեր սին օրերուն :»

Թարգմ. ՄԱՆԵՒՅՆ

ՏԻԿ. ԹԱՍԹԻԻ


Խարբերդ - Հիւսէյնիկ



Ուրախութեամբ կ'իմանանք ծանօթ գիտուն ու ճարտար
 Բժիշկ Տօթթ. Ն. Տաղաւարեանի քրոջ՝ Ազն. Օր. Ովսաննա Տա-
 ղաւարեանի ամուսնութիւնը Սեդրաք էֆ. Աճէմեանի հետ, որ
 տեղի ունեցաւ ի Ֆիլիպէ :

Տիկին Ովսաննա Ս. Աճէմեան՝ բարձր դաստիարակութեամբ
 օժտուած՝ զարդն ըլլալու կոչուած է նորակազմ ընտանիքին, որու
 պետը՝ Սեդրաք էֆ. Ֆիլիպէի բարձր դասակարգի համակրելի
 անդամներէ մին ու հրապարակի գործունեայ անհատներէն ե-
 ղած է :

ԹՈՒԱԲԱՆԱՆԱՆ ԽՆԴԻՐ



Ահաւասիկ շրջանակ մը որուն ու-
 թը շառաւիղներուն վրայ պարապ
 տեղեր կան թիւեր գրելու : Մեր
 ընթերցողներու ճարպիկութենէն
 կախում ունի 1—17 թիւերը այն-
 պէս մը գետեղել անոնց մէջ որ
 մէկ գծի վրայ գտնուած բոլոր
 թիւերուն գումարը 45 ելլէ, իսկ
 ութը շառաւիղներուն ծայրի կամ
 մէջտեղը գտնուած բոլոր թիւե-
 րուն գումարը 75 ըլլայ :

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԽԱՂ ՄԸ

Հետեւեալ զրերու ցուցակը, որուն միջոցաւ կարելի է դիւրութեամբ գիտնալ միտք պահուած բառ մը կամ որ եւ է մարդու մը անունը, պիտի կազմէ մէկ մասը՝ ձեր ընտանեկան երեկոյթներուն, որոնք կը սարքուին ձմրան երկար զիշերները անմեղ զուարճութեամբ անցընելու համար:

Ա	Բ	Դ	Ի	Մ
Գ	Դ	Ե	Լ	Ն
Ե	Զ	Չ	Խ	Շ
Ժ	Ժ	Ժ	Յ	Չ
Լ	Խ	Կ	Կ	Պ
Մ	Մ	Հ	Հ	Ս
Հ	Չ	Չ	Չ	Վ
Ճ	Ճ	Ճ	Ճ	Տ
Ն	Շ	Պ	Ր	Ր
Չ	Չ	Ս	Օ	Օ
Ս	Վ	Վ	Ֆ	Ֆ
Տ	Տ	Տ		
Օ	Ֆ			

Հանդիսականներէն մէկն իր մտքին մէջ անուն մը կամ բառ մը պահելէ վերջ, իրեն ներկայացուած վերի ցուցակին թող նայի եւ ըսէ թէ այդ անունին կամ բառին առաջին գիրը քանի՞ եւ ո՞ր սիւնակներուն մէջ կը կը գտնուի: Եթէ միայն մէկ սիւնակի մէջ կը գտնուի, ցուցուած սիւնակին գագաթի գիրն է այդ: Իսկ եթէ մէկ քանի սիւնակներու մէջ, քանի՞ սիւնակներու մէջ որ կայ, այդ սիւնակներուն գագաթի գրերն առ եւ անոնց այբուբենական թիւերը գումարէ, արդիւնքն է գտնուած գրին այբուբենական թիւն: Այս ուղղութեամբ գտիր բառին երկրորդ, երրորդ գրերը եւ շարունակէ մինչեւ որ անունին կամ բառին բոլոր գրերը գտնաս:

Օրինակի համար, առնենք Տիգրան անունը: Տը կը գտնուի չորս սիւնակներու մէջ, որոնց գագաթի գրերն են Ա Բ Դ Մ: Սոյն գիրերը Շարք այբուբենիցին մէջ, իրենց առնչութեան համեմատ՝ առաջին, երկրորդ, չորրորդ եւ տասնըվեցերորդ գրերն են զորս գումարելով կը գտնենք 23: Շարք այբուբենիցին մէջ կը փնտռենք 23րդ գիրը, եւ ահա Տը գտնուած է: Ի գիրը միայն մէկ (չորրորդ) սիւնակին մէջ կայ եւ ուստի գագաթի գիրն է այդ Ի: Դ ը՝ երկու սիւնակներու մէջ կայ, որոնց գագաթի գրերը Ա և Բ Շարք այբուբենիցին մէջ առաջին եւ երկրորդ տեղը բռնած են: Ասոնց գումարն է երեք ու Շարք այբուբենիցին մէջ երրորդ գիրը Գ է: Ժիշդ այս կերպով կրնանք գտնել մնացեալ Բ Ա և Ն գրերն ալ ալ:

Կարելու պայման. — Յարմարութեան համար, անուանմը կամ բառի մը մէջ եթէ է գիրը կայ, անոր տեղ պէտք փնտռել ե գիրը,

Թ	գրին	տեղ	Դ	գիրը
Ղ	»	»	Խ	»
Յ	»	»	Հ	»
Ո	»	»	Օ	»
Ջ	»	»	Չ	»
Ռ	»	»	Ր	»
Ց	»	»	Ձ	»
Ի	»	»	Վ	»
Փ	»	լ»	Բ	»
Ք	»	»	Գ	»

խոյ « ը » ու « և » գրերը արդէն անգործածելի են այս խաղին մէջ: Ուստի, այս խաղին սիրոյն համար, հետեւեալ գրերու շարքը թող ըլլայ պահ մը Հայ լեզուի այբուբէնը.
Ա. Բ. Գ. Դ. Ե. Ջ. Ժ. Ի. Լ. Խ. Մ. Կ. Հ. Ձ. Ճ. Մ. Ն. Շ.
Չ. Պ. Ս. Վ. Տ. Ր. Օ. Ֆ.

Այս խաղին ճարտարօրէն գործածութիւնը պիտի չարժէ ոչ նուազ հետաքրքրութիւնը ամէն անոնց որոնք տեղեակ չեն խաղին բանալիին:

Խոշոր գրերով գրէ ցուցակը սեւ տախտակի մը կամ ճերմակ խաւաքարտի մը վրայ: Ձեր տան մէջ հիւր գտնուող անձերու առջեւ կատարէ քու ճարտարի փորձը. այսպէսով Բարեկենդանի երկար գիշերները անցընելու համար նորութիւն մ'ալ ունեցած կ'ըլլաւ:


ՏԻԳՐԱՆ Յ. ՏԻԼԿԵՐԵԱՆ

ԵՐԿՐԱԶՈՓԱԿԱՆ ԳԼՈՒԽ ԶԱԹՈՒԿ ՄԷ

Եթէ աշխիւսդները տակաւին ոսկի շինելու միջոցը չեն գտած, եթէ մանկեմանիկոսները դեռ չեն կրցած շրջանակ մը քառակուսիի վերածել, գէթ մեր ընկերացողներէն մին յաջողած է անանկ կատկեր մը շինել. որ միանգամայն թէ քառակուսի է եւ թէ ութանկիւն:

Ձեք հաւատար: Անձամբ փորձեցէք:

Բայց դուք ալ քիչ մը աշխատելու էք: Սոյն պատկերը երեք տեղէ վկրատի երէք հարուածով կտրեցէք եւ կտորները իրարու քով բերելով պիտի տեսնէք որ թէ՛ քառակուսի է եւ թէ ութանկիւն:



ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԷՆՆԱՆ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Խիւ 38, Իգտամ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վաճառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ Համար

30 զրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վաճառականացի 12 օրու զաւտ առնել ուզողը պէտք է վճարէ 12 զրուշ:

Ֆուանսերէն Ստրուիլ Ուզողներուն

Ֆուանսերէն լեզուն հիմնական կերպով, դիւրութեամբ եւ կարճ ժամանակի մէջ՝ առանց ուսուցչի՝ սորվիլ փափաքողներուն կը յանձնարարենք Կ. Ս. Տէմիրեան էֆէնտիի

Մ Ե Ն Տ ՈՐ Մ Ա Ն Կ Ա Ն Ց

Կ Ա Մ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ ԴԱՍԸՆԹԱՑԻԸ

Որ լոյս տեսաւ մեր տպարանէն մաքուր և խնամեալ տպագրութիւնով:

1. Մենսոր Մանկանց, Առաջին գիրք. Բերական եւ զրուցատրական վաժութիւններ, բոլորովին նոր մէթոտով, գին 2 զրշ:

2. Մենսոր Մանկանց, Երկրորդ գիրք, զրուցատրական վաժութիւններ, Ֆրանս. Ի Հայ եւ իտալացարձ թարգմանութիւններ, քերականական նախնական ծանօթութիւններ: Գին 4 զրշ:

3. Մենսոր Մանկանց. Երրորդ գիրք. հաւաքածոյ աշխարհագրական, թուրքական, իրաւագիտական, պատմական, կրօնական և բարոյագիտական խտացեալ եւ ճոխ դասերու, վայելչախօսական եւ քերականական ամէնէն գործածական կանոններով եւ հըրահանգներով սարքուած եւ համաձայն Ուսումն. նորհուրդի Կըրթական Յրագրին: Մովոյ տակ: Գին 6 զրշ:

Մեծ. Հեղինակին սոյն երկասիրութիւնները արդարեւ նորութիւն մըն են եւ բազմաթիւ Ուսուցիչներու կողմէ արժանապէս գնահատուած:

Յանձնարարութեան համար գիմել Պէրպէրեան տպարան, Կ. Պոլի, Պապ Ալի ճատտէսի, թիւ 38. և Հեղինակին հասցէին՝ Կէտիկ փաշա, Մեսրոպեան վարժարան:

Հատը 30 փարայ